

ՆԻԿՈԼԱՅ ԱՌՈՒՏԱՎԱՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԳԱԼՍՅԱՆ

«Միջազգային ինտեգրում» հասարակական

կազմակերպության նախագահ, Հայաստանի ամերիկյան

համալսարանի իրավագիտության մագիստրոս

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԱՆՑԱՓՈՐՁԻ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ

Երկրում ընթացող դատարակական քարե-
փոխումների շրջանակներում իրականացվել են
քազմաքայլ միջոցառումներ, այդ թվում՝ ինստիտու-
ցիոնալ փոփոխություններ քրեական արդարադա-
տությունում, մասնավորապես նաև՝ քրեակատա-
րողական համակարգում: Իրականացված մի շաբք
օրենսդրական փոփոխություններ միտված են եղել
պատմի նշանակմանը և կրմանը ներկայացվող մի-
ջազգային այնպիսի սկզբունքների և չափանիշնե-
րի ապահովմանը, ինչպիսիք են՝ պատմի անհա-
տականացումը, խոշտանգումների կամ դաժան,
անմարդկային կամ անձի արժանապատվությունը
նվաստացնող վերաբերմունքի կամ պատմի ան-
թույլատրելիությունը, պատմի կրման համար մի-
ջազգային չափանիշներին համապատասխան
պայմանների հնարավորինս ապահովումը և այլն:

Քրեական քաղաքականության նախառական ամբողջական իրականացմանն ուղղված հե-
տագա փոփոխությունների կարևորագույն խնդիր-
ներից է պատմի նպատակների՝ սոցիալական ար-
դարության վերականգնման, դատապարտյալի
ուղղման, հանցագործությունների կանխարգելման
արդյունավետ և ամբողջական իրականացման
ապահովումը: Այս խնդրի լուծման համար կարևոր-
վում է այն, որ քրեական արդարադատությունում
դեռևս առկա են թե տեսական, և թե գործնական
հարթության խնդիրներ: Մասնավորապես, կան
խնդիրներ, որոնք կապված են ՀՀ քրեական
օրենսգրքով սահմանված հանցագործությունների
տեսակների հետ, դրանց դասակարգման, հանցա-
փորձի և հանցագործության նախապատրաստու-
թյան համար պատիժ սահմանելու առանձնահատ-
կությունների հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝
Օրենսգիրք) 33-րդ հոդվածը տալիս է ավարտված և
չափարարված հանցագործությունների սահմանու-

մբ, ըստ որի:

1. Ավարտված հանցագործություն է հա-
մարվում այն արարքը, որը պարունակում է սույն
օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր
հատկանիշները:

2. Չափարարված հանցագործություն են հա-
մարվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես
ծանր հանցագործությունների նախապատրաս-
տությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ
հանցագործության նախապատրաստության և
հանցափորձի համար պատասխանատվությունը
վրա է հասնում Օրենսգրքի հատուկ մասի նույն
հոդվածով, իսկ ավարտված հանցագործության
համար՝ հոդվածով կատարելով Օրենսգրքի 34-րդ (հան-
ցափորձը) կամ 35-րդ (հանցագործության նախա-
պատրաստությունը) հոդվածին:

Օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝
հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորու-
թյամբ կատարված այն գործողությունը (անզոր-
ծությունը), որն անմիջականորեն ուղղված է հան-
ցանք կատարելուն, եթե հանցագործությունն
ավարտին չի հասցել անձի կամքից անկախ հան-
գամանքներով:

Օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝
հանցագործության նախապատրաստություն է հա-
մարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կա-
տարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք
բերելով կամ հարնարեցնելով, ինչպես նաև դիտավո-
րությամբ այլ պայմաններ ստեղծելով, եթե հանցա-
գործությունն ավարտին չի հասցել այդ անձի
կամքից անկախ հանցանքներով:

Այսպիսով, Օրենսգրքով հանցագործու-
թյան փորձի կամ նախապատրաստության համար
արարքը որակելիս նշվում է Օրենսգրքի հատուկ
մասի համապատասխան հոդվածը՝ հոդվածը՝ հոդված

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Օրենսգրքի 34-րդ կամ 35-րդ հոդվածին (օրինակ՝ 34-104՝ սպառության փորձ):

Բացի այդ, Օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանվում է չափարարակած հանցագործության համար պատիժ նշանակելը, ըստ որի՝ հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը (Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մաս): Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանցագործի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: Ըստ էության, Օրենսգրքը հստակ սահմանում է հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատժաչափերը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցափորձի և հանցագործության նախապատրաստության դեպքում պատիժ նշանակելիս, նախ պետք է հաշվի առնել հանցագործության հանգամանքները, արարքը ավարտին շիացնելու պատճառները, անձի բնութագիրը և այլն:

Հանցագործության հանգամանքներին անդրադանալիս, քրեական իրավունքի տեսությունում, հատկապես հանցափորձի և հանցագործության նախապատրաստության դեպքերում, կարևորվում են մի շարք գործոններ՝ արարքի հանցագործությունը որոշելու համար ուսումնասիրվում են արարքի օրենկույթի և սուրյեկտիվ կողմերը:

Օրենկույթիվ կողմին անդրադանալիս, ինչպես ավարտված հանցագործության դեպքում, այնպես էլ հանցափորձի և հանցագործության նախապատրաստության դեպքում, անհրաժեշտ է, որպեսզի կոնկրետ գործողություն դրսևորված լինի (actus reus): Այսինքն՝ զուտ հանցավոր մտադրությունը բավական չէ, որպեսզի անձը պատասխանատվության ենթարկվի հանցափորձի կամ հանցագործության նախապատրաստության համար¹:

Սուրյեկտիվ կողմը քննելիս, անհրաժեշտ է, որպեսզի անձի մոտ առկա լինի հանցավոր մտադրություն (mens rea): Արարքը պետք է իր մեջ պարունակի հանցանք կատարելու ուղղակի դիտավորություն: Այս դրույթն ամրագրված է նաև Օրենսգրքի 34-րդ և 35-րդ հոդվածներում: «Հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատար-

ված այն գործողությունը (անգործությունը)....», «Հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար....»: Օրենսգրքը հստակորեն սահմանում է ուղղակի դիտավորության անհրաժեշտությունը: Հետևաբար, քննարկվող նյութի իմաստով անզգուշությամբ կատարված հանցագործության փորձի մասին խոսք լինել չի կարող: Այս տեսակետն առկա է նաև քրեական իրավունքի շատ տեսաբանների մոտ²:

Որոշակի առանձնահատկություններ են սահմանվում նաև հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատիժ նշանակելիս: Մասնավորապես, բացի Օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից, (հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները), 65-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են այն հանգամանքները, որոնք պետք է հաշվի առնելու հանցափորձի և հանցագործության նախապատրաստության ժամանակ, մասնավորապես՝ հանցավորի կատարած գործողությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունը ավարտին չի հասցվել: Այս և այլ սկզբունքներ կարևորվում են նաև մի շարք այլ երկրների քրեական օրենսգրքերում՝ հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատիժ նշանակելիս: Օրինակ՝ Բուլղարիայի քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի ժամանակ պատիժ նշանակելիս հաշվի են առնելու հանցագործի և արարքի հանրության համար հասարակական վտանգավորության աստիճանը, հանցագործություն կատարելու դրդապատճառները, ինչպես նաև այլ մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ: Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 132-24-րդ հոդվածի համաձայն՝ հանցափորձի համար պատիժը նշանակելիս և պատիժի կրման պայմանները սահմանելիս պետք է հիմնվել հանցագործի անձնային հատկանիշների և հանցագործության հանգամանքների վրա: Հատվածայի քրեական օրենսգրքով, ի թիվս նշված հանգամանքների, պետք է նաև հաշվի առնել հանցագործի կողմից իր կատարած արարքի վտանգավորության գիտակ-

ցումը և հանցագործությունն ավարտին չհասցնելու հանգամանքները: Ավելին, մի շարք երկրներում, ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների փորձի համար պատասխանատվություն չի սահմանվում, ինչպես օրինակ՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Նորվեգիայում, իսկ Ֆինլանդիայում և Լատվիայում հանցափորձը պատժվում է միայն, եթե այն սահմանված է կոնկրետ հոդվածով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից ևս կարելի է եզրակացնել, որ հանցափորձը դիտվում է շատ ավելի մեղմ հանցանք, քան ավարտված հանցագործությունն է, իսկ որոշ դեպքերում անձը անգամ պատասխանատվության չի ենթարկվում:

Եթե հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար պատիճ նշանակելիս մի շարք երկրների օրենսգրքեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքն ունեն գրեթե նույն մոտեցումը, ապա նույնը չի կարելի ասել հանցափորձը և հանցագործության նախապատրաստությունը դասակարգելու մասին: Օրենսգրքի 19-րդ հոդվածով սահմանվում է հանցագործությունների տեսակները, համաձայն որի՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների: Հոդվածի բովանդակությունից պարզ է դասում, որ, չնայած հանցագործությունների դասակարգման հիմքում արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը որպես չափանիշ դրված լինելուն, դասակարգումն իրականացվում է ըստ հանցագործության համար Օրենսգրքով սահմանված պատժաչափի, սահմանելով հանցագործությունների ծանրության աստիճանները, իմք է ընդունվում Օրենսգրքի Հատուկ մասով սահմանված կոնկրետ հանցագործության համար նախատեսված առավելագույն պատժաչափը:

Այս մոտեցումն առաջին հայացքից պարզ է: Թվում է, թե Օրենսգրքով տրված է հստակ կարգավորում, որն ընդունված է նաև մի շարք այլ երկրների քրեական օրենսգրքերի կողմից: Սակայն, տեսական և գործնական վերլուծությունները վեր են հանում առևա որոշ խնդիրներ: Մասնավորապես, օրենսդիրն ուղղակի ամրագրել է, որ հանցագործությունների դասակարգումը ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կատարվում է «ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի»: Դրանից ենելով՝ պետք է հավաստել, որ յուրաքանչյուր հանցագործություն նշանակած տե-

սակներից որևէ մեկին դասելով պետք է իրականացվի հատկապես հաշվի առնելով ոտնձգության հասարակական վտանգավորությունը, որա բնույթն ու աստիճանը: Մինչդեռ 19-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուր տեսակի միակ տարրերի հատկանիշ է Օրենսգրքով նախատեսված պատժը³: Կատարված տեսական վերլուծության արդյունքում ակնհայտ է դատում այն հակասությունը, որ առևա է Օրենսգրքի 19-րդ հոդվածում՝ հանցագործությունների դասակարգման հիմքում նշելով արարքի բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, այնուամենայնիվ, դասակարգումը, փասորեն, կատարվում է այլ հիմքով՝ պատժաչափով:

Նման մոտեցման վերաբերյալ ֆրանսիացի քրեագետ Ռուսին (Ըստ Ն.Ս. Տագանցելի վկայության) պնդում էր, որ օրենքում հանցագործությունների դասակարգումն ըստ պատժաչափի իրականացնելով նշանակում է ասել հասարակությանը. «Մի՛ աշխատեք ուսումնասիրել մարդկային արարքների ներքին էուրունը, այլ նայե՛ք իշխանությանը: Եթե նա որևէ մեկի գլուխը կտրում է, ուրեմն պետք է ենթադրել, որ մարդը մեծագույն չարագործ է»:

Օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանցափորձի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել Օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը: Արդյունքում, օրինակ՝ առանձնապես ծանր հանցագործության հանցափորձի համար նշանակած պատժի շատ հաճախ համապատասխանում է ավելի նվազ ծանրության աստիճանի համար սահմանված պատժաչափին, սակայն, իմք ընդունելով Օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը միայն, գործնականում այն որակվում է որպես առանձնապես ծանր հանցագործություն՝ օրենսդրական համապատասխան կարգավորման բացակայության հետևանքով:

Միջազգային իրավական կարգավորման բացակայության պարագայում միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հարցը միանշանակ կարգավորված չէ նաև մի շարք այլ երկրներում ևս:

Որոշ երկրներ իրենց քրեական օրենսգրքերում հստակ սահմանում են, որ հանցափորձը և հանցագործության նախապատրաստությունը չեն կարող համարվել ավելի նվազ ծանրության հանցագործություններ, քան ավարտված հանցագործությունը: Մասնավորապես, Էստոնիայի և Գերմանիայի քրեական օրենսգրքերով սահմանվում է, որ հանցափորձը, ինչպես նաև այլ մեղմացուցիչ հանցամանքները չեն կարող նվազեցնել հանցագործության ծանրության աստիճանը:

Այս մոտեցումն առկա է նաև որոշ տեսաբանների մոտ, որոնք այն կարծիքին են, որ հանցափորձի և հանցագործության նախապատրաստության համար կարող է նշանակվել նույն պատիժը, ինչը որ ավարտված հանցագործության համար է սահմանված և հանցափորձը կամ հանցագործության նախապատրաստությունը պետք է որակվեն որպես ավարտված հանցագործության ծանրության հանցագործություն: Որպես այս տեսակետի հիմնավորում՝ տեսաբանները իմք են վերցնում «քարոյական վնասը»: Հանցափորձի և հանցագործության նախապատրաստության ժամանակ, անձը դրսերում է այն հանցափոր մտադրությունը և կատարում է այն գործողությունները, որոնք ուղղված են կոնկրետ հանցագործությունը կատարելուն, հետևաբար անհրաժեշտ է նրանց համար սահմանել նույն պատիժը⁶:

Սակայն, այս մոտեցման ընդդիմախոսները արդարացիորեն նշում են, որ հանցագործության ծանրությունը որակելիս և պատիժ նշանակելիս, պետք է հաշվի առնել ոչ միայն «քարոյական վնասը», այլ նաև մի շարք այլ հանցամանքներ, ինչպես օրինակ՝ հանցագործությամբ պատճառված փաստացի վնասը, արարքի հանրային վտանգավորությունը, հանցագործությունն ավարտին չհասցնելու հանցամանքները, ինչպես նաև հանցագործի անճնային հատկանիշները: Մեկ այլ հանցամանք ևս եքել հանցափորձի կամ հանցագործության նախապատրաստության համար սահմանվի հավասար պատիժ, ինչ որ ավարտված հանցագործության համար, ապա «հանցափորձ», «հանցագործության նախապատրաստություն» հասկացությունները՝ իրենց բոլոր իրավական հետևանքներով հանդերձ, այլևս իմաստագրկվում են (սա վերաբերվում է նաև հանցագործության կազմակերպիչին, դրդիչին և օժանդակողին):⁷

Բացի այդ, հանցափորձի և հանցագործության նախապատրաստությունն ավարտված հանցագործությունից նվազ ծանրության հանցագործություն սահմանելը (նույն ձևով իմք ընդունելով օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով սահմանված պատժաչափը), ոչ միայն կհստակեցնի կոնկրետ հանցագործության տեսակը՝ դրա նախապատրաստության կամ փորձի դեպքում, այլ նաև հնարավորություն կտա լուծելու նման դեպքերում դատապարտված անձի նկատմամբ պատժի նշանակման և պատժի կրման հետ կապված մի շարք խնդիրներ: Մասնավորապես, որպես հանցագործության դասակարգման իրավական հետևանք կարևոր է նշել, որ հանցագործության տեսակները հաշվի են առնվում ռեցիլիվի տեսակը գնահատելիս, քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամ-

հանցագործություն որակելը բխում է նաև կանկրետ երկրի քրեական ու մասնավորապես, պատժի քաղաքականությունից և այն նպատակներից, որոնք դրված են այդ երկրում իրականացվող քրեական քաղաքականության հիմքում:

Այս մոտեցումը որդեգրված է ԱՄՆ-ի մի շարք մահանգմերի կողմից, որոնց քրեական օրենսգրքերում հստակ սահմանված է, որ հանցափորձը և հանցագործության նախապատրաստությունը որակվում են որպես մեկ աստիճանով նվազ ծանրության հանցագործություն, քան ավարտված հանցագործություն (օրինակ՝ Տեխաս, Կոնեկտիվիտ, Ինդիանա և այլն):

Նպատակահարմար է օրենսդրական համապատասխան փոփոխությամբ հանցափորձը կամ հանցագործության նախապատրաստությունը սահմանել որպես ավարտված հանցագործություններից նվազ ծանրության հանցագործություն, ինչը բխում է նաև այսօր երկրում իրավանացվող քարեփոխումներից և հանդիսանում է ևս մեկ քայլ դեպի քրեական համակարգում մարդասիրության սկզբունքի ամրապնդումը:

Քրեական քաղաքականությանն անդրադառնախս, ներկայումս պետք է նաև հաշվի առնել տնտեսական արդյունավետության գործոնը: Ինչպես արդարացիորեն նշում է Թոմաս Բիտները. «Երկիրը չունի անսահմանափակ քանակությամբ ռեսուրսներ, որպեսզի հանցափորձի և ավարտված հանցագործության համար նշանակի նույն խսության պատիժ» (THOMAS BITTNER “Punishment for Criminal Attempts: A Legal Perspective on the Problem of Moral Luck” CANADIAN JOURNAL OF PHILOSOPHY *Punishment for Criminal Attempts* 5511, Volume 38, Number 1, March 2008):

Բացի այդ, հանցափորձը կամ հանցագործության նախապատրաստությունը, որպես ավարտված հանցագործությունից նվազ ծանրության հանցագործություն սահմանելը (նույն ձևով իմք ընդունելով օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով սահմանված պատժաչափը), ոչ միայն կհստակեցնի կոնկրետ հանցագործության տեսակը՝ դրա նախապատրաստության կամ փորձի դեպքում, այլ նաև հնարավորություն կտա լուծելու նման դեպքերում դատապարտված անձի նկատմամբ պատժի նշանակման և պատժի կրման հետ կապված մի շարք խնդիրներ: Մասնավորապես, որպես հանցագործության դասակարգման իրավական հետևանք կարևոր է նշել, որ հանցագործության տեսակները հաշվի են առնվում ռեցիլիվի տեսակը գնահատելիս, քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամ-

կետները, դատվածության մարման ժամկետները որոշվում են ըստ հանցագործությունների տեսակների, քրեական պատասխանատվությունից և պատմից կարող է ազատվել ոչ մեծ կամ միջին ժանրության հանցանք կատարած անձը և այլն:

Նշանակված պատմի կրման համար ուղղիչ հիմնարկի տեսակը, որով էլ պայմանավորված, պատմի կրման կարգն ու պայմանները, որոշելիս, իմբ է հանդիսանում հանցագործության ծանրության աստիճանը (ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 100-րդ հոդված): Հետևաբար, օրինակ՝ առանձնապես ծանր հանցագործության փորձի համար առաջին անգամ դատապարտված անձը, պատմիթը կրում է ոչ թե կիսաբաց, այլ կիսափակ ուղղիչ հիմնարկում: Դրանով իսկ՝ պատմի անհատականացման սկզբունքի կիրառումը գրունականում դառնում է խարարված:

Պատմից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատմի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը ևս անմիջականորեն կապված են հանցագործության ծանրության աստիճանի հետ (Օրենսգրքի 76-77-րդ հոդվածներ): Այսինքն, առանձնապես ծանր հանցագործության փորձի համար դատապարտված անձը, պատմից պայմանական վաղաժամկետ ազատվելու համար, պետք է կրի նշանակված պատմի ոչ

պակաս, քան երկու երրորդը, իսկ ծանր հանցագործության համար նշանակված պատմի ոչ պակաս, քան կեսը:

Ավելին, հարցի օրենսդրական կարգավորումը բխում է նաև Օրենսգրքի գրքի տրամաբանությունից: Եթե Օրենսգրքով հստակ սահմանվում են հանցագործության տեսակները՝ իմբք ընդունելով կոնկրետ պատմի չափը, ապա հանցափորձը և հանցագործության նախապատրաստությունը պետք է հստակ դասակարգվեն հենց պատժաչափից էլ ելնելով, քանի որ Օրենսգրքի 65-րդ հոդվածով հստակ սահմանվում է պատժաչափի թե հանցափորձի, և թե հանցագործության նախապատրաստության համար:

Ի վերջո, հանցափորձի և հանցագործության նախապատրաստության օրենսդրությունը հստակ դասակարգումն անհրաժեշտ է նաև Օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի (արարքի հանցափորությունը, դրա պատժելիությունը և քրեական պատժաչափի այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով. քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է) ամբողջականությունն ու լիարժեքությունն ապահովելու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

- ՀՀ քրեական օրենսգրքը, ընդունված 18.04.2003, ՀՕ-528-Ն:
- «ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս» Դասագիրք ԲՈՒՀ-երի համար, խմբ. Գ.Ս. Ղազինյան, Երևանի համալսարանի իրատարակչություն, Երևան 2006:
- Միքայել Գրիգորյան. «Քրեական իրավունք» ուսումնական ձեռնարկ(ընդհանուր մաս), «Հրազդան» իրատարակչություն, Երևան 2003:
- THOMAS BITTNER “Punishment for Criminal Attempts: A Legal Perspective on the Problem of Moral Luck” CANADIAN JOURNAL OF PHILOSOPHY Punishment for Criminal Attempts 5511, Volume 38, Number 1, March 2008
- Уголовное право Российской Федерации. Общая часть, Учебник, Московская Государственная Юридическая Академия, Москва Высшее Образование серия основана в 1996 г.
- Study Guide to Wayne LeFave: “Crim Law Hornbook” 5th edition, pg.15.
- Joel Feinberg, “Equal Punishment for Failed Attempts”, Arizona Law Review 37 (1995) 117-33.
- Andrew Ashworth, ‘Criminal Attempts and the Role of Resulting Harm’, Rutgers Law Review 19 (1988) 725-72.
- Таганцев Н.С. Русское уголовное право: Лекции. Часть Общая, Т 1. Москва 1994.
- Наумов А.В. Российское уголовное право. Общая часть. Курс лекций. Москва, 1997.
- Thaddeus Metz, ‘Arbitrariness, Justice, and Respect,’ Social Theory and Practice 26 (2000) 25-45.
- Bernard Williams, ‘Moral Luck,’ in Moral Luck (Cambridge: Cambridge UP 1983), 29-30.
- George P. Fletcher, Basic Concepts of Criminal Law (New York: Oxford UP 1998), Chapter 10.
- Kenny, C.S, “Outlines of criminal Law” 2002, Chap.V , p. 91.
- Suwarn Rajan: “Attempt in criminal law” article, 2009, viewed on 16.03.2012 <http://www.lawyersclubindia.com/articles/ATTEMPT-IN-CRIMINAL-LAW-1664.asp>.
- Student Law: Criminal law- topic 12: Attempt, viewed on 16.03.2012 <http://www.studentatlaw.com/articles/371/Criminal-Law---Topic12-Attempt/Page1.html>.
- Texas crimes classification: viewed on 19.03.2012 <http://rcwhitelaw.com/practice-areas/criminal-defense/texas-criminal-defense/texas-crime-classifications/>.
- <http://www.arlis.am/#>.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

19. <http://www.lexadin.nl/wlg/>.
 20. <http://www.lexisnexis.com/lawschool/study/outlines/html/crim/crim20.htm>.

¹ St'u Study Guide to Wayne LeFave: "Crim Law Hornbook" 5th edition, pg.15.

² St'u Suwarn Rajan: "Attempt in criminal law" article, 2009, <http://www.lawyersclubindia.com/articles/ATTEMPT-IN-CRIMINAL-LAW-1664.asp>.

³ St'u Սիրայել Գրիգորյան. «Քրեական իրավունք» ուսումնական ձեռնարկ (ընդհանուր մաս), Երևան 2003:

⁴ St'u Տաղանցև Հ.С. Ռուսկու սպառագիր պատմությունները և դրանք առաջարկությունները. Երևան 1994, էջ 58.

⁵ St'u Էստոնիայի քրեական օրենսգրքի 4.4 հոդված: Գերմանիայի քրեական օրենսգրքի 12.3 հոդված:

⁶ St'u Joel Feinberg, "Equal Punishment for Failed Attempts," Arizona Law Review 37 (1995) 117-33, Andrew Ashworth, "Criminal Attempts and the Role of Resulting Harm".

Rutgers Law Review 19 (1988) 725-72.

⁷ St'u Thomas Bittner "Punishment for Criminal Attempts: A Legal Perspective on the Problem of Moral Luck" CANADIAN JOURNAL OF PHILOSOPHY Punishment for Criminal Attempts 5511, Volume 38, Number 1, March 2008, pp. 51-84.

⁸ St'u «ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս», Դասագիրք ԲՈՒՀ-երի համար, Երևան 2006:

РЕЗЮМЕ

Классификация Преступлений в Случае Покушения на Преступление и Приготовления к Преступлению

В статье авторы представляют проблему классификации в случае покушения на преступление и приготовления к преступлению в Уголовном Кодексе РА.

Анализ соответствующих статей УК РА определяет существующие несоответствия в Кодексе. По характеру и степени общественной опасности преступления, статья 19 УК РА определяет 4 категории преступлений. Хотя статья 19 УК РА предусматривает характер и степень общественной опасности преступления, как основу для классификации, но очевидно, что данная классификация основана на размере наказания, предусмотренной Особой Частью УК РА.

УК РА не устанавливает особую классификацию для покушения на преступление и приготовления к преступлению. Покушение и приготовление классифицируются по категории тяжести соответствующего преступления. Отсутствие четкого регулирования классификации покушения на преступление и приготовления к преступлению приводит к разным теоретическим и практическим проблемам.

Исследование международной практики показывает, что не существует одинакового регулирования вопроса.

Презумпция авторов заключается в том, что покушение на преступление и приготовление к преступлению должны классифицироваться как менее тяжкие преступления, чем оконченные преступления.

SUMMARY

Classification of the Crimes in cases of attempt and preparation

In the article the authors present the issue of classification of the criminal attempt and preparation in the RA Criminal Code.

The authors make analysis of certain articles of RA Criminal Code and reveal the gaps that exists in the Code. Based on the gravity of the offence, article 19 of the RA Criminal Code classifies the crimes into 4 types. Though the article states that the classification is based on the dangerous nature of the attempt, it is clear from the article that the classification is based on the severity of the sentence for the crime prescribed by the Special Part of the RA Criminal Code. The RA Criminal Code does not state a special type of classification for an attempt and preparation. The attempt and preparation are considered as a same gravity offence as the completed crime. According to the RA Criminal Code, while classifying the attempt or preparation the reference to the completed crime is given (e.g.: attempt of murder 104-34). The absence of the specific classification of the attempt and preparation leads to various theoretical and practical issues that are discussed in the article.

The research of international practice shows that there is no uniformity in this regard.

The authors presumption is that the attempt and preparation of the crime should be classified as a less severe crimes than the completed one.